



Ամերիաբանկ ՓԲԸ-ի բազային տոկոսադրույքը մարտ ամսվա համար

Ամերիաբանկի լողացող տոկոսադրույքի հիմքում ընկած բազային տոկոսադրույքը 2010 թվականի մարտ ամսվա համար կազմում է համապատասխանաբար.

	Իրավաբանական անձանց		Ֆիզիկական անձանց	
	AMD	USD	AMD	USD
Փետրվար 2010	11.1%	7.4%	12.5%	9.0%
Մարտ 2010	11.5%	7.4%	12.9%	9.1%

	Իրավաբանական անձանց		Ֆիզիկական անձանց	
	AMD	USD	AMD	USD
Մարտ 2009	11.9%	8.2%	12.7%	9.2%
Մարտ 2010	11.5%	7.4%	12.9%	9.1%

Բազային տոկոսադրույքների փոփոխությունը վերջին տասներկու ամիսների ընթացքում.



Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից հրապարակվող լողացող տոկոսադրույքի նպատակն ու հաշվարկման կարգը

Լողացող տոկոսադրույքն իրենից ներկայացնում է փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի ֆիքսված մարժայի հանրագումար: Բազային տոկոսադրույքը հաշվարկվում է որպես ֆինանսական շուկայի մի շարք տոկոսադրույքների կշռված միջին: Դրանք տվյալ ժամանակահատվածի վարկերի, ավանդների, միջբանկային գործառնությունների և ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքներն են: Լողացող տոկոսադրույքը կիրառվում է հիմնականում երկարաժամկետ վարկերի համար և դրա նպատակը ապագայում տոկոսադրույքների փոփոխության դեպքում վարկերի տոկոսադրույքների վերանայումն է՝ աճի կամ նվազման ուղղությամբ: Վերանայման պահից սկսած վարկի տոկոսավճարների հաշվեգրումն ու գանձումը կատարվում է վերանայված տոկոսադրույքով:

Լողացող տոկոսադրույքի կիրառման արդյունքում բանկն առավել արդյունավետ է կառավարում տոկոսադրույքի ռիսկը, որի արդյունքում հնարավորություն է ունենում վարկեր տրամադրել ավելի ցածր տոկոսադրույքներով (որպես կանոն վարկը տրամադրելու պահին լողացող տոկոսադրույքը ավելի ցածր է լինում ֆիքսված տոկոսադրույքից): Լողացող տոկոսադրույքի հիմքում ընկած բազային տոկոսադրույքը վերանայվում է վեց ամիսը մեկ անգամ: Ֆիքսված մարժան, որը գումարվում է բազային տոկոսադրույքին, սահմանվում է վարկը տրամադրելու պահին և կախված է հաճախորդի վարկարժանությունից:

Ներկայումս Ամերիաբանկի կողմից լողացող տոկոսադրույքներով վարկեր դեռևս չեն տրամադրվում: Այնուամենայնիվ, Ամերիաբանկը յուրաքանչյուր ամիս հրապարակում է բազային տոկոսադրույքի փոփոխությունը, որն ուղենշային կարող է լինել վարկավորման տոկոսադրույքները փոփոխելու համար:

Լողացող տոկոսադրույքի հաշվարկման բանաձև.

Ֆիզիկական անձանց դեպքում.

$$FR_I = BR_I + \text{Մարժա}$$

$$BR_I = W_D * R_{DI} + W_L * R_{LI} + W_I * R_I + W_{CBA} * R_{CBA} \text{ (կամ } W_{LIBOR} * R_{LIBOR} \text{)}$$

Իրավաբանական անձանց դեպքում.

$$FR_L = BR_L + \text{Մարժա}$$

$$BR_L = W_D * R_{DI} + W_L * R_{LL} + W_I * R_I + W_{CBA} * R_{CBA} \text{ (կամ } W_{LIBOR} * R_{LIBOR} \text{)}$$

որտեղ՝

FR - Լողացող տոկոսադրույք

BR - Բազային տոկոսադրույք

R_{LL} - վերջին 2 ամսվա իրավաբանական անձանց վարկերի միջին տոկոսադրույք

R_{LI} - վերջին 2 ամսվա ֆիզիկական անձանց վարկերի միջին տոկոսադրույք

R_{DI} - վերջին 2 ամսվա ֆիզիկական անձանց ավանդների միջին տոկոսադրույք

R_I - վերջին 2 ամսվա միջբանկային ռեպո գործառնությունների միջին տոկոսադրույք

R_{CBA} - նախորդ ժամանակահատվածի վերջին օրվա ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք (1 շաբաթյա ռեպո) ՀՀ դրամի համար

$R_{LIBOR6mo}$ - նախորդ ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ 6 ամսվա ԼԻԲՕՐ տոկոսադրույք (1 շաբաթյա ռեպո) ԱՄՆ դոլարի համար

W_L - վարկերի տոկոսադրույքի կշիռ (0.4)

W_D - ավանդների տոկոսադրույքի կշիռ (0.2)

W_I - միջբանկային ռեպո տոկոսադրույքի կշիռ (0.2) ՀՀ դրամի համար

W_{CBA} - ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի կշիռ (0.2) ՀՀ դրամի համար

W_{LIBOR} - ԼԻԲՕՐ տոկոսադրույքի կշիռ (0.4) ԱՄՆ դոլարի համար

Սահմանափակում: $W_L + W_D + W_I + W_{CBA}(\text{կամ } W_{LIBOR}) = 1$

Տոկոսադրույքների աղբյուրներ.

www.cba.am/CBA_SITE/downloads/parberakan/texekagir/fin_shuk.pdf, www.cba.am, www.bba.org.uk

Տոկոսադրույքների կշիռներն ըստ վարկերի տեսակների և արժույթների:

	Իրավաբանական անձինք		Ֆիզիկական անձինք	
	AMD	USD	AMD	USD
ավանդների տոկոսադրույք	0.2	0.2	0.2	0.2
վարկերի տոկոսադրույք	0.4	0.4	0.4	0.4
միջբանկային ռեպո տոկոսադրույք	0.2	-	0.2	-
ՀՀ ԿԲ ռեպո տոկոսադրույք	0.2	-	0.2	-
6 ամսվա ԼԻԲՕՐ տոկոսադրույք	-	0.4	-	0.4